

ՏԱՐՕՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏԻՉ Վ. ԽՐԻՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ՝

ՊԻՈՍ Թ. ՊԱՊԻ ՀՐԱԽԵՐԻՆ ԱՌԹԻԻ

Պերապատի Սրբազան Տէր, Պործակից Եղբայր Ի Քրիստոս,

Ձեր եղբայրութենէն նամակ մը ստացայ Արժանապատիւ Հայր Մաղաքիոսին ձեռքով: Նամակին մէջ ներփակ կար Հոռոմի Սրբազան Քահանայապետին Հրաւիրագիրը: Երկուքն ալ մեծ ուրախութեամբ կարդացի, լաւ հասկցայ, և համաձայն մեր քրիստոնէական պարտականութեան և աշխարհի քաղաքավարական օրէնքներուն ահա պատասխանը կը գրեմ Ձեզի:

Գերապատիւ Տէր, Դուք կը յայտնէք թէ այս նամակը ի պաշտօնէ գրելով կը ղրկէք մեզի, որպէս կամակատարը Ձեր գերագոյն Հեղինակութեան՝ Հոռոմի Սրբազան Քահանայապետին, և համաձայն Պոլիս գտնուող Ձեր Գերերջանիկ Պատրիարքին: Իսկ մենք, ձեզի պէս, մեր ձեռքին մէջ չունինք այդ իրաւունքը՝ ո՛չ էջմիածնայ Ընդհանուր Հայրապետէն և ո՛չ ալ Կ. Պոլսոյ Սրբազան Պատրիարքէն՝ Հոռոմի Սրբազան Քահանայապետին հրաւերը ընդունելու կամ չընդունելու: Հետեւաբար, այս պատասխանը պիտի նկատէք միայն իմ կողմէ, իբրև մեր ազատ սկզբունքը, և ոչ իբր պաշտօնական գիր մը, զոր թէպէտ քիչ մը համառօտութեան սահմանէն անցուցի քաղաքատաճ ձեր հակիրճ գրութեան, սակայն մեր ընդարձակ պատասխանը մասամբ աւելի հրաւիրագրին իմաստին և նպատակին կը պատկանի, որով այսքանը առ այժմ բաւ համարեցէք. իսկ կէտ առ կէտ պատասխանը կը թողում ուրիշ անգամի:

Մենք վստահ ըլլալով բնաւ չէինք կարծեր թէ Հոռոմի Աթոռին Գահակալը Արևելքի եպիսկոպոսներէն ամենուն և առանց խտրականութեան հրաւեր ուղղելով բոլորը վատիկանի ընդարձակագոյն դահլիճը կը հրաւիրէ: Թէպէտ անշուշտ Հոռոմի եպիսկոպոսապետը ինքն իր կողմէն, հայրական պարտք համարելով, ամէնը առհասարակ կը հրաւիրէ, սակայն ո՞վ չի կրնար ուղիղ կերպով մտածել թէ այս ձևի հրաւեր մը իւրաքանչիւր ազգային եկեղեցւոյ նախնիքներու կանոններուն և սահմանադրութեան օրինագիծէն դուրս է և չեղում: Ու այս չեղումը պարզ և ակամայ սխալ մը չէ. հարկաւ թաքուն նպատակ մը ունի իր մէջ զոր այժմ պատշաճ չեմ համարեր Հոս նշել:

Քրիստոսի առաքեալներուն վիճակուած ամէն մէկ երկիր իր յատուկ առաքեալը ունի և իւրաքանչիւր առաքեալ իր յաջորդը: Սուրբ Պետրոսի յաջորդն է Պիոս Թ., Սուրբ Թադէոսի յաջորդն է Տ. Գէորգ Դ.: Եթէ Պիոս Թ. ին նպատակն է միայն Հայաստանեայց եկեղեցւոյ և աշխարհին հետ նոր դաշնագիր մը կնքել, այն ատեն կը բաւէր իր հրաւիրագիրը միայն Հայոց Հայրապետին ուղղել: Իսկ եթէ ինք իր և իր կարտինալներուն խորհուրդովը միայն յայտարարութիւն կը ղրկէ Արևելքի բոլոր եպիսկոպոսներուն գալ տիեզերական ժողովի, ո՞վ կը լսէ և կը հաւատայ թէ սոսկ ձայն մը Հոռոմի Հայրապետէն կարող է ի մի բերել Արևելք, Հիւսիս և Հարաւ, այդ իրար հակառակ համոզումներն ու տարբերութիւնները: Այս երեք անկիւնի կողմերը այնքան հեռու են Հոռոմէն՝ որ թերևս Գաբրիէլի հանդերձալ փողը նոյնիսկ չկարենայ իր ահաւոր ձայնը հասցնել:

Առաքեալներու քարոզութենէն ցայսօր թերևս միայն երեք անգամ տիեզերական ժողով գումարուած է: Միթէ միայն Հայրապետի մը ձեռնարկութեամբ եղած են այս ժողովները. ո՛չ բնաւ: Եկեղեցւոյ պատմութիւնը մեզի կ'ըսէ թէ ինչպէս, և ինչ զօրաւոր Հեղինակութեամբ 318 Հայրապետները Նիկիա հաւաքուած են::

Յառաջ բերած այս խօսքերովս կ'ուզեմ ըսել թէ Պիոս Թ.ի տիեզերական ժողով մը գումարելու հրաւիրագիրը ո'չ մէկ Հեղինակութիւն ունի, քանի ան Սիոնի Վերնատան միութենէն բխած չէ՝, այսինքն՝ գէթ մի քանի առաքելական յաջորդներու միախորհուրդ և միաձայն որոշումէն:

Ուրեմն ինչպէ՞ս կարելի է և ի՞նչ է օրինաւոր ձևը տիեզերական ժողով մը կազմելու: Այդ խնդիրը, եթէ Հռոմ բարեհաճի մեզի հարցնել, նոյնիսկ եկեղեցւոյ ամենատղջմիտ եպիսկոպոսներն անգամ այս պատասխանը կու տան – Բրիտոս, Երուսաղէմ, Սիոն Լեռ և Վերնատուն – ահա ասոնք են եկեղեցւոյ միութեան ճշմարիտ խորհրդատուն և միակ կեդրոնը ընդհանուր աշխարհի համատարած քրիստոնէական շրջանակին:

Ուրեմն, եթէ իսկապէս, Սուրբ Պետրոսի յաջորդը կը սիրէ եկեղեցւոյ միութիւնը, թող ան ելլէ Վատիկանի պալատէն, Յունաց Ընդհանուր Հայրապետը՝ Պոլսոյ Ֆէնէրի Պատրիարքարանէն, Սուրբ Թաղէոսի յաջորդը՝ էջմիածնի Վեհարանէն, մէկդի թողով քաղաքական նկատառումները, առաքելական մախարով և Բրիտոսի խոնարհութեամբ երթան Երուսաղէմ, հաւաքուին աշխարհամուտ Տաճարին մէջ, ա՛յն գերեզմանաքարին մօտ, որ Միա՛կ Տիեզերական Եկեղեցւոյ Վէմն ու Անկիւնաքարն է:

Որչա՛փ ցանկալի պիտի ըլլար որ այս քարին առաջ ուխտէին ու միանային առաքելական յաջորդները և Հոն խմբագրէին տիեզերական ժողովի հրաւիրագիրը: Այս մեծ ու հոգևոր ձեռնարկին կէտը, անշուշտ եթէ Մեծն Կոստանդինոսի կամ Թէոդոսի ոգիով է – քանի աշխարհի վեհապետներու կամքն ալ ձուլումի միութեան գաղափարով են – այսինքն, Ուշի գաւազանին Հետ սուրբ իշխանութեան գաւազանն ևս գուգաձայն հրամայէ, այն ատեն ո՞վ չի հաւատար թէ Տիեզերական Ժողովի գործը կատարեալ կ'ըլլայ:

Նոյնիսկ եթէ այնպէս համարենք որ Պիոս Թ.ի հրաւիրագիրը մեզի եկած է Երուսաղէմի գերագոյն Հեղինակութենէն, մենք նկատելով մեր խոնարհ վիճակը միթէ կարո՞ղ ենք երթալ այդ մեծ Ժողովին: Ձեզի և բոլոր աշխարհին քաջ թաղտի է թէ Հայաստանեայց Եկեղեցին – որուն գլուխը կը հանդիսանայ Սուրբ Թաղէոսի և Գրիգոր Լուսաւորչի յաջորդը՝ էջմիածնայ Կաթողիկոսը, որուն ենթարկուած են Հայաստանի բոլոր վիճակաւոր եպիսկոպոսները – նոյն ինքնազատ կառավարութիւնը ունի, ինչպէս ուրիշ եկեղեցիներ: Անոնցմէ ո՞վ իրաւունք ունի, առանց օրինաւոր Սինոդի, առանց եկեղեցւոյ համաձայնութեան և հաւանութեան, ինքնազուիս երթալ Տիեզերական Ժողովի: Արդեօք կարելի՞ է իրրեւ պատգամաւոր ներկայանալ Հոն առանց պաշտօնական իրաւասութիւն մը ունենալու Հայաստանեայց Եկեղեցւոյ Համագումար Ժողովի ատենանէն: Եթէ այսպէս է, ուրեմն պէտք է սպասել և տեսնել թէ Արարարտեան Եկեղեցւոյ Մայրաքաղոյն ատենադր որքան կարևորութիւն պիտի տայ Հռոմի հրաւերին, անոր կարծիքը ի՞նչ է և ի՞նչ պիտի որոշէ: Մենք ահա այս որոշման և վճիռին ազատակամ հպատակող պաշտօնեաներ ենք:

Առաւել, մենք զմեզ նկատելով Սուրբ Աւետարանի նպատակին ազատ աշակերտ մը, նկատելով իրը նոյն սուրբ գիտութեամբ քարոզող եկեղեցւոյ վարդապետ, ու նաև զմեզ նկատելով Հայաստանեայց սուրբ, ուղղափառ, առաքելական և աւանդապահ եկեղեցւոյ անձնուէր անդամ, երկու տեսակի զլխաւոր պարտականութիւն կը զգանք մեր Հոգիին մէջ: Նախ՝ ընդհանուր եկեղեցւոյ վերաբերող ամէն խնդիր Աւետարանի սուրբ սկզբունքներուն և մեր երանելի սուրբ Հայրերու աւանդած վարդապետութեան Հետ համեմատել, այո՛ն այո, և ոչը՝ ոչ, ընդունիլ կամ չընդունիլ: Այս մէկը հաւասարապէս եկեղեցւոյ բոլոր վարդապետներուն իրաւունքն է ու բաժինը: Բայց անշուշտ իւրաքանչիւրը իր

ընդունած չնորհներուն ձիւրքովն ու գիտութեան չափովը կարող է վարդապետել, դասել և որոշել: Երկրորդ, իբրև Հարազատ զաւակը այն սուրբ Հայրերուն՝ Գրիգորի, Ներսէսի և Սահակի, որոնք զիս ի Քրիստոս ծնան ու դաստիարակեցին, իմ այս Հոգեւոր Հայրերուն ամենամեծ իրաւունքը՝ զոր Յիսուս տուաւ Թաղէոսի, Թաղէոսի՝ Գրիգորի, Գրիգորի՝ իր բոլոր յաջորդներուն, այդ իրաւունքը՝ իբրև քաղաք մը բարձրացած է Մասիսի գագաթին վրայ:

Այո՛, Հայաստանեայց եկեղեցւոյ քաղաքը բարձր է իր ամէն իրաւունքներովը, անոր Հիմը Հաստատած է Յիսուս՝ Սանդարամետին գլխուն վրայ: Անոր պարիսպները աղամանդեայ են: Անոր դուռը բաց է ու ազատ. ով որ մտնէ՝ կ'ընդունի, և ով որ ելլել ուզէ չ'արգիլեն: Անոր շինուածքին բոլոր քարերը Արտազի դաշտի սուրբ նահատակներն են: Այս քաղաքը անպահանջան է: Անոր պարիսպներուն վրայ անքուն կը հսկեն երկու Առաքեալ և մէկ Հայրապետ. Թաղէոսի ձեռքին մէջ՝ Աւետարան, Բարթողիմէոսի ձեռքը՝ Տիրամօր կենդանագիր պատկերը, իսկ Գրիգորի ձեռքը՝ Նիկիոյ Սուրբ Ժողովին Հանգանակը: Ուրեմն թող ո'չ ոք փորձէ այս քաղաքը գրաւել կամ տիրապետել: Ինչ կը կարծեն Արեւմտեան Եկեղեցիները: Այս քաղաքին բանալին որո՞ւ յանձնուած է. Աւետարանի ճշմարտութիւնն ու մեր նախնիքներու անսխալական աւանդութիւնները ցոյց կու տան թէ ան յանձնուած է Հայաստանի Առաքեալ Թաղէոսի: Հիմա, տասնամէկերորդ դարէն ցայսօր աշխարհալուր վէճ մը յարուցուած է Աւետարանի գործակից երկու եղբայրներու՝ Սուրբ Պետրոսի և Թաղէոսի միջև. մէկը Աւետարանի խօսքը առնելով կը փաստաբանէ թէ Յիսուս միայն իրեն տուած է այդ մեծ բանալին, որպէսզի բոլոր ազգերուն դէմ միայն ինք կարողանայ բանալ երկնքի դուռը: Իսկ միւսը՝ Հազար և մէկ ճշմարիտ վկաներ մէջբերելով կը հաստատէ թէ նոյն մեր Վարդապետը, Յիսուս, իրեն ալ տուած է Պետրոսի բանալիին յար և նման բանալի մը, անոր բանալիին մեծութեամբ, զօրութեամբ և իրաւասութեամբ: Ան այդ բանալին Երուսաղէմէն առնելով եկած է Հայաստան, ու բացած երկնքի արքայութեան դուռը խաւարի մէջ նստող ու Անահիտ պալատող մարդոց դէմ:

Ուրհեցէ՛ք. Գերապայծառ Տէր, լուրջ և զգաստ խօսելով: Եթէ Սուրբ Պետրոսի յաջորդ՝ Պիոս Թ. Հոռնի Հայրապետը իր ներկայ Հրաւիրազրով, Տիեզերական Ժողով կազմելով դարձեալ բանալիներու խնդիր պիտի յարուցանէ, ու նոյն բանալին պիտի պահանջէ Սուրբ Թաղէոսի յաջորդէն, զայն իր առանձնաշնորհումը նկատելով, և կամ ալ ըսէ, «տո՛ւր» և կամ «Իմ Հրամանովս բաց ու փակէ՛», ճշմարիտ կ'ըսեմ, ի զուր և պարապ է գիշերային այս վաստակն ու յոգնութիւնը, որովհետեւ ի վերջոյ իր նախորդին՝ Զկնորս Պետրոսին նման գանձատեղով պիտի ըսէ, «Տէ՛ր, գամենայն գիշեր աշխատեցաք և ոչինչ կալաք»: Եթէ ինք կը կարծէ թէ զօրաւոր է Պետրոս՝ Մաղդոսի ականջը կտրող սուրով, ես կ'ըսեմ առաւել քաջակորով է Թաղէոս՝ ճշմարտութեան անպարտելի գէնքով: Բնաւ կարելի պիտի չըլլայ այդ բանալին կորզել անոր ձեռքէն և տանել մինչև աշխարհի վերջը:

Հետեւաբար ինչ է ճարը որ այս երկու տարանջատ եղբայրները արդարադատօքն իրարու հետ Հաշտուին: Ասոր միակ ճարը Պետրոսի ձեռքն է, որ պէտք է մէկդի դնէ իր յամառ սկզբունքը և միշտ բանալիներու խնդիր չհանէ. թող Աւետարանի սիրով Հաշտութեան ձեռք երկարէ իր խռովեալ եղբոր Թաղէոսի, ուխտէ յանուն Սատուծոյ այլևս քնաւ չարտաբերել այդ անունը՝ որ Աւետարանի յիշած Անուս և Յիմար անուանելէն աւելի ծանր է. ա'յն անունը՝ որ Թաղէոսի և իր Հիմնած եկեղեցւոյ դէմ անհուն թշնամանք է. ա'յն անունը՝ որ Ուշեալ Աստուծոյ կողը մխուած սայրասուր գեղարդէն աւելի ուժեղ կը խոցէ Հայաստանի զաւակներու սիրտերը, որոնց անունները Յիսուսի սուրբ անունով

կնքուած են և օծուած՝ երկնքի Հօր որդիներ կոչուելով, ու աւագանի Սրբարանէն սորվելով, մշտամրմունջ այսպէս կ'աղօթեն. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո ի վերայ մեր»:

Օն ուրեմն, եթէ Հռոմի Պետրոսը կը ձայնէ Հայաստանի Թաղէոսին, և պաղատելով եկեղեցւոյ խաղաղութիւն և միութիւն կ'ուզէ, թող ուշքի գայ ուրեմն և նախ թող իր նորահնար տոմարին մէջէն ջնջէ իր արձանագրած անհանդուրժելի անունը, երկրորդ՝ թող իր եղբօրմէն՝ Թաղէոսէն, բնաւ չխնդրէ անոր իրաւունքներուն բանալին:

Ահա՛ այս է միակ միջոցը խաղաղութեան և միութեան, որ անխզելի սիրով Հռոմը կը կապէ Հայաստանին և Պետրոսը Թաղէոսի հետ, մէկ խօսքով, Արևմուտքը՝ Արևելքին հետ: Ահա Տիեզերական ժողովին կատարումն ու վախճանը, որ առանց Հռոմ երթալու կը վերջանայ:

Այս բարեղէպ օրուան սրտի բոլոր գօրութեամբը ցանկացող, իբրև «Նոր Մեսիայի գալստեան»:

Մ. Վ. ԽՐԻՄԵԱՆ
Եպիսկոպոս Տարօնոյ

Առաջնորդարան Հայոց Կարնոյ
1869 Յունուար 18

ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ

Ապերախտութիւն...

Դու՛ երախտիքի անխախտ թշնամի,

Դու՛ սատանայի սիրած յատկութիւն...

Գթութիւն հայցող խղճով հայեացքով

Շատերի գութն ես շարժում դէպի քեզ,

Որ նրանք գթան...

Բայց երբ գթում են,

Մտքով խորհում ես, փնտռել մէկ առիթ՝

Նրանցից իսկոյն վրէժդ առնել...

Քո «որդեգրած» յատկանիշներն են՝

Կեղծատրութիւնն ու խաբէութիւնը,

Կեղծ բարութիւնն ու անգթութիւնը,

Դրսից սիրտ շահող մեղմ բարութիւնը,

Ներսից՝ թրատող ատելութիւնը...

Անդարձ սրտերի դու «քաղաքացի»,

Ուրիշ տենչ չունես խայթելուց բացի...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ